Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 2

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ 2024/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով համակարգիչների համար սկաների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

01.04.2024 թվական **ք. Գյումրի**

1. Գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստում գնումների համակարգողը գնահատող հանձնաժողովի անդամներին ներկայացրեց «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ 2024/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով համակարգիչների համար սկաների ձեռքբերման համար հայտարարված մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրի վերաբերյալ ՀՀ պետական վերահսկողական ծառայության 2024 թվականի մարտի 29-ի թիվ Ե/720-24 գրությամբ բարձրացված հարցը:

Համաձայն ՀՀ պետական վերահսկողական ծառայության դիտարկման «Հրավերի տեխնիկական բնութագրում հղում է կատարվել ապրանքի կոնկրետ «Սկաներ (EPSON)» ապրանքանշանին, սակայն չի ներկայացվել համարժեք առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը»:

Այնուհետև նշվել է, որ «Համաձայն «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի՝ *գնման առարկայի բնութագրերը՝*

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, իսկ 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: ***Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակեն «կամ համարժեք» բառերը:***

Միաժամանակ, *ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ* ***դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով և նույն կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ նախատեսված՝ պատվիրատուի ղեկավարի հետ համաձայնեցված դեպքերում կատարվող***

գնումների: Ապրանքների գնման դեպքում հղումներ օգտագործելիս ներկայացվում են որպես համարժեք առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը»:

ՀՀ Պետական վերահսկողական ծառայությունը ամփոփելով վերոգրյալը և ղեկավարվելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով՝ առաջարկվում է Հրավերը համապատասխանեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին և ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տեղեկացնել Ծառայությանը:

Հիմք ընդունելով ՀՀ Պետական վերահսկողական ծառայության դիտարկումները, գնահատող հանձնաժողովը որոշեց.

Համակարգիչների համար սկաների ձեռքբերման հրավերի տեխնիկական բնութագրում կատարել համապատասխան փոփոխություն «Սկաներ (EPSON) կամ համարժեքը» բառերը փոխարինել «Սկաներ (EPSON, CANON, HP)» բառերով և տեխնիկական բնութագիրը շարադրել նոր խմբագրությամբ.

«Սկաներ (EPSON, CANON, HP), ավտոմատ կրկնակի սկանավորում Auto Document Feeder-ի (ADF) միջոցով , գումարած պլանշետային ռեժիմ լուսանկարների ID-ների, անձնագրերի, և այլնի համար: թղթի ավտոմատ փոխանցմամբ (ADF) , արագությունը 40-45 էջ րոպեում կամ ավելի, երկկողմանի սկան (Duplex Scan) A4, A5 ֆորմատի, խտությունը 600x600. (dpi) կամ ավելի, փաստաթղթի չափը՝ նվազագույնը՝ 2"x2", առավելագույնը՝ 8.5"x240", տարողությունը՝ 50 էջ կամ ավելին մրցույթը շահող կազմակերպությունը պետք է տրամադրի առնվազն մեկ տարվա երաշխիքային սպասարկում: Մասնակիցը պարտավոր է ներկայացնելու իր կողմից առաջարկվող ապրանքային նշանի ֆիրմային անվանման, մոդելի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն»:

2. Որոշվեց գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի օր և ժամ սահմանել 2024 թվականի ապրիլի 16-ը ժամը 11:30-ը:

Հանձնաժողովի նախագահ՝ Աստղիկ Ալեքսանյան

Անդամներ՝ Աննա Պետրոսյան

Անահիտ Հարությունյան

Իրինա Ջանոյան

Համակարգող քարտուղար՝ Զարիկ Մուրադյան